Հանդիսավոր արարողությունից հետո նորընծաներն ուղղվում են դեպի Վեհարան, ուր Ամենայն Հայոց Հայրապետը իր հայրական օրհնությունն ու խրատներն է բաշխում նրանց, ցանկանում տեսնել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու արժանավոր սպասավորների շարքում՝ որպես Աստծո և ժողովրդի հավատարիմ ծառաներ և «Մշակք առանց ամօթոյ»:

Տ. ՆԵՐՍԵՀ ԱԲԵՂԱ ԽԱԼԱԹՅԱՆ

(Ավազանի անունով՝ Արմեն)

Ծնվել է 1972 թվականին Թբիլիսիում, ծառայողի ընտանիքում:

1979 թվականին ընդունվել է տեղի թիվ 109 միջնակարգ դպրոց և ավարտել այն 1989-ին: Նույն թվականին էլ ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան և 1995-ին ավարտել լրիվ դասընթացը:

1995 թվականի հոկտեմբերի 22-ին, ձեռամբ Անանիա եպիսկոպոս Արաբաջյանի, ձեռնադրվել է սարկավագ: 1995 թվականի հուլիսի 11-ին պաշտպանել է ավարտաճառը՝ «Գրիգոր Խլաթեցու կյանքն ու մատենագրական ժառանգությունը» թեմայով և արժանացել «լավ» գնահատականի:

Որպես տնօրեն՝ պաշտոնավարել է Ալեք Մանուկյան Գանձատանը:

1996 թվականի նոյեմբերի 24-ին, Ամենայն Հայոց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հրամանով և ձեռամբ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

Տ. ՄԱՇՏՈՑ ԱԲԵՂԱ ԺՈՌՈՅԱՆ

(Ավազանի անունով՝ Մուշեղ)

Ծնվել է 1968 թ. հուլիսի 25-ին Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղում: 1975-85 թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1986-88 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1989 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի